47-ՐԴ ՆԻՍՏ

16 դեկտ[եմբերի] 1918թ.

Նիստը բանալով, նախագահ *Ա. Սահակյանը* հայտարարում է հետևյալ օրակարգը.

1. Կառավարության հայտարարությունը.
2. Օրինագիծ պարենավորման մինիստրին ցորեն գնելու համար յոթ միլիոն ռուբլու վարկ բանալու մասին.
3. Ընթացիկ գործեր:

Մինիստր-նախագահ - Անգլիական բանակի սպա, կապիտան Գրինը, որը ուղարկված էր Ալեքսանդրապոլ և Կարս գեներալ Թոմսոնի կողմից, երեկ առավոտյան ժամը 10-ին մեր զորահրամանատար Դրոյի միջոցով մի քանի առաջարկներ է արել հայ-վրացական հարաբերությունների և Լոռվա մասին: Քիչ հետո այդ բոլորի մասին կզեկուցեմ ձեզ, իսկ նախապես պարտականություն եմ համարում զեկուցելու անցյալ երեք օրվա ընթացքում եղած պատերազմական վիճակի մասին:

Զեկուցման ժամանակ դահլիճ է մտնում ֆրանսիական ներկայացուցիչը, որին ի պատիվ խորհուրդը և հասարակությունը հոտնկայս օվացիաներ է սարքում. (ծախակողմի պատգամավորները չեն կանգնում): Ահա այն հեռագիրները, որ ես պատիվ ունեմ խորհրդին ներկայացնելու, որից Դուք կտեսնեք, որ այս երեք օրվա ընթացքում մեր քաջարի զորքերն ունեցել են միշտ հաջողություն և այն վայրերը, որոնք բռնել էին վրաց զորքերը, մերոնք արդեն գրավել են, և մեր հողերն անցել է մեր ձեռքը: Կառավարությունը հույս ունի այս երեք օրվա ընթացքում մեր տերիտորիան մեր ձեռքը գցել: Բայց կառավարությունը նույնպես մատնանշում է, որ անհամաձայնությունների պատճառ դարձող խնդիրները ուրախ կլիներ, որ հարթվեին: Ձենքի դիմեցինք մի այնպիսի ժամանակ, երբ այլևս ուրիշ միջոց չէր մնացել: Հայաստանի ժողովրդի, նրա կյանքի, ֆիզիկական գոյության պահպանության համար ուրիշ միջոց չէր մնացել, և դուք վստահ կարող եք լինել, որ Հայաստանի կառավարությունը պատեհ րոպեին կարող է վերջ դնել պատերազմական գործողություններին:

Ես նորից վերադառնում եմ այն առաջարկին, որ արել է կապիտան Գրինը հետևյալ պայմաններով.

« 1. Երկու շաբաթով հայտարարել զինադադար, 2. Վրաց զորքերն անմիջապես մաքրում են Ախալքալաքի գավառն ու Բորչալուն՝ մինչև Խրամ գետը. հայկական զորամասերը չեն գրավում այդ շրջանները, 3. Ախալքալաքի և Բորչալվի գավառների ժողովուրդն անարգել վերադառնում է իր վայրերը, 4. երկաթուղային հաղորդակցությունը վերականգնվում է, 5. պարենավորման նյութերը փոխադրվում են առանց արգելքի և 6. վիճելի խնդիրները լուծվում են Անգլիայի կողմից»: Այս հեռագիրը ձեր կառավարությունը ստացավ երեկ առավոտյան ժամը 11-ին, որից հետո նա կազմեց մի խորհրդակցություն, որ զբաղվեց այսօր ճաշին և երեկոյան, որից հետո նա ուղղեց հրամանատար Դրոյին հետևյալը. ասեմ, որ Դրոն կապիտան Գրինի հետ գնացել է Սանահին. «Կառավարությունը կապիտան Գրինի առաջարկը սկզբունքային համակրությամբ է ընդունում, բայց վերջնական պատասխան կտրվի միայն խորհրդից դիրեկտիվներ ստանալուց հետո և հենց այդ հարցի համար վաղը երեկոյան շտապ նիստ է գումարվելու: Այդ բանն անհրաժեշտ է , քանի որ Լոռիի դեպքերը խորհրդի որոշմամբ են ձեռնարկված: Խորհրդում զեկուցում տալու համար անհրաժեշտ է կապիտան Գրինից ստանալ մի քանի բացատրություններ նրա առաջարկի հետևյալ կետերի նկատմամբ: Առաջին կետի մասին՝ տրվու՞մ է, արդյոք, երաշխիք, որ վրացիները չեն օգտագործի զինադադարը զորքի ուժեղացման և կենտրոնացման համար: Երկրորդ կետի մասին՝ համաձայն ազգագրական սկզբունքի և ազգերի ինքնորոշման իրավունքի, Ախալքալաքի ամբողջ գավառը և Բորչալվի հայկական մասը անվիճելիորեն մենք համարում ենք Հայաստանին պատկանյալ. վիճելի ենք համարում միայն Խրամ գետից հյուսիս գտնվող մասը: Հինգերորդ կետի մասին՝ ի՞նչ հարցեր պիտի լուծվեն և քննվեն Սանահինում գումարվելիք Հայաստանի և Վրաստանի ներկայացուցիչների ժողովին: Վեցերորդ կետի մասին՝ հնարավոր չէ՞ արդյոք զրահապատ գնացքը թողնել Հայաստանի տնօրինության տակ, որպիսին շատ անհրաժեշտ է Հայաստանին՝ Երևան-Ջուլֆա երկաթուղագիծը պարսկական քրդերի հարձակումներից պաշտպանելու համար: Մի լրացուցիչ հարց ևս. այս առաջարկն արվա՞ծ է Վրաստանի Հանրապետության և ի՞նչ պատասխան է ստացված: Սպասում եմ պատասխանի՝ վաղը խորհրդին զեկուցելու համար: Դեկտ[եմբերի] 15-ին, ժամը 24-ին, հմ. 231: Մինիստր-նախագահ՝ Քաջազնունի»:

Այսօր՝ մի ժամ առաջ, կապիտան Գրինից ստացվեց հետևյալ հեռագիրը.

«Մինիստր-նախագահ Քաջազնունուն: Առաջին կետի մասին՝ ո՛չ, չեմ կարող: Եթե վրացիները սկսեն զորախաղացում, զինադադարը խախտվում է: Երկրորդ կետի մասին՝ այդ հարցը լուծելու է հաշտարար վեհաժողովը. հինգերորդ կետի մասին՝ այդ ժամանակավոր միջոց է, որով հնարավոր է երկաթուղագծի վրա փոխադարձ աշխատանք: Վեցերորդ խնդրի մասին՝ գնացքի խնդիրը կլուծվի արբիտրաժով: Իմ նպատակն է կոնֆլիկտին վերջ տալ և հանձնել դաշնակիցների արբիտրաժին, միևնույն ժամանակ և վերականգնել երկաթուղագիծը, վերջ տալ ժողովուրդների տանջանքին: Նորից հայտնում եմ հինգերորդ կետը, որ դուք սխալ եք հասկացել: Սանահին կայարանում երկու կողմերի ներկայացուցիչները պետք է փոխադարձ ջանքերով կանոնավորեն և հսկեն գնացքների երթևեկության: 1918թ. դեկտ[եմբերի] 16: Կապիտան Գրին»:

Ուրեմն տեսնում եք, թե որքան սահմանափակ խնդիրներ են դրված համագումարի առջև: Այս գիշեր, իհարկե, որոշ պատասխան պիտի տանք կապիտան Գրինին, նայած թե կառավարությունը ինչպիսի հրահանգներ պիտի ստանա խորհրդից:

Մարտ. Հարությունյան - Ես կխնդրեի հնարավորություն տալ պառլամենտին կես ժամ ընդմիջումով եզրակացության գալ ֆրակցիաներում:

Մինախորյան - Հավելյալ դիմումի մասին պատասխան կա՞:

Մին[իստր]-նախագահ - Այդ հարցը մենք հեռագրել էինք երեկ գիշեր, այսօր այդ հարցին պատասխան չկա:

Ավդալբեկյան - Ես խնդրում եմ կրկնել կապիտան Գրինի առաջարկի այն մասը, որ վերաբերում է նրա նպատակին:

Մին[իստր]-նախագահ - (կարդում է)«Իմ նպատակն է վերջ տալ կոնֆլիկտին և հանձնել դաշնակիցների արբիտրաժին, միևնույն ժամանակ վերականգնել երկաթուղագիծը և վերջ տալ ժողովուրդների տանջանքին»:

Ստ. Մամիկոնյան - Զինվորական մինիստրը ստացե՞լ է որևէ տեղեկություն Ախալքալաքի մասին:

Մին[իստր]-նախագահ - Ոչ մի տեղեկություն չկա.

Նախագահ - Նիստը հայտարարում եմ ընդմիջված:

Գիշերվա ժամը 10 և $^1/_2$-ին վերսկսվում է նիստը:

Նախագահ - Այստեղ է գտնվում մեր թանկագին հյուր ֆրանսիական ներկայացուցիչ Պուադիբարը: Խորհրդի կողմից ողջունում եմ նրան և մեր մեծ դաշնակցին՝ հայ ժողովրդի կողմից, որ նրանց փոքր դաշնակիցն է եղել: (Բուռն ծափահարություններ):

Ֆրանսիական ներկայացուցիչը, ծափերի մեջ ձայն խնդրելով, ասում է.

«Ազգային խորհուրդը թող ներե ինձի, որ ձեր այնչափ գեղեցիկ լեզուն գեշ կխոսեմ: Ձեր այնչափ ջերմ ընդունելության համար կպատասխանեմ մեր բանակի և մեր երկրի կողմից: Ձեզի կուզեմ հիշեցնել գեներալ Ֆոշի խոսքերը, երբ Ֆրանսիայի մեջ ամբողջ Հայաստանի մասին խոսք բացվեց, մեզանում եղան մարդիկ, որոնք ասացին, թե ինչի համար այնչափ դժվար օրերին ուրիշ երկրների մասին մտածենք: Գեներալ Ֆոշը նրանց պատասխանեց. դուք այդչափ մեծ խնդրի մասին խոսելու իրավունք չունեք, որովհետև Հայաստանի խնդիր[ը] մեծ խնդիր է և

Ֆրանսիան չի կարող մոռանալ Հայաստան (բուռն և երկարատև ծափահարություններ): Եթե այսօր Անգլիան և Ֆրանսիան դժվարության կիանդիպեն, գիտցեք, որ Ձեր ժողովրդի և Հայաստանի սիրո համար է: Գեն[երալ] Թոմսոնի միտք այսօր Ձեզի և Ձեր ժողովրդին ցորեն ղրկելն է: Նա գիտե, որ ձեր ժողովրդի զավակներ տառապում են քաղցից: Գեներալ Թոմսոնի նպատակը հայտնի է ինձ. նա ասաց, որ աշխատելու է Հայաստանում ճանապարհների բացման, որպեսզի այս խեղճ ժողովուրդ վերջ գտնե իր չարչարանքներին»: (Բուռն ծափահարություն, որ փոխվում է օվացիայի):

Նախագահ - Առաջարկում եմ հարգել կռվի դաշտում ընկած մեր քաջերի և ընկածների հիշատակը:

(Հոտնկայս հարգվում է նահատակների հիշատակը):

Մ. Հարությունյան - Կխնդրեի նախագահության մեր ողջույնի խոսքն ուղղել մեր քաջարի բանակին, որ իր արյան գնով պաշտպանում է Լոռվա շրջանի մեր ժողովուրդը և ապա այս ջերմ զգացմունքի համար ուղարկել մեր ողջույնները և հույսերը ֆրանսիական պառլամենտին, որ այնքան հաջող կերպով վարում է փոքր ժողովուրդների դատը:

Նիկ[ոլ] Աղբալյան - Պարոննե՛ր, կառավարությունը իր զեկուցման մեջ հայտնեց ձեզ անգլիական կապիտանի առաջարկած պայմանները, որ կարելի է նկատել մի նախագիծ այն հիմունքների, որով կարելի է խաղաղությամբ լուծել այս խնդիրը: Այդ կետերից մեկը մեր զորքերն անմիջապես ետ քաշելն է այն վայրերից, որ նոքա գտնվում են, կամ գտնվելու են վաղը: Այս կետն առաջարկված է միայն այն նպատակով, որ անգլիական կապիտանը բնավ ծանոթ չէ այն պայմաններին և երկրին, ուր նա գտնվում է: Նա չգիտե այս երկրի պատմական անցյալը և այն փոխհարաբերությունները դրացի երեք ժողովուրդների միջև և եթե նա ծանոթ լիներ, դժվար թե այդպիսի առաջարկություն աներ: Ես սխալված չեմ լինի, եթե ասեմ, որ մեր հարևանների դերը, մանավանդ այս պատերազմի ընթացքին, երկդիմի էր և անկեղծ չէր դեպի այն պետությունը, որի քաղաքացիներն էին և դեպի այն դատը, որ վարում էին դաշնակիցները: Կամավորական խնդրի ժամանակ նրանք չխնայեցին ոչ մի ջանք, որպեսզի արգելեն հայ կամավորական շարժումը: Կամավորական շարժումը ուրիշ բան չէր, այլ սոսկական մի պարտք, որ մենք պատրաստ էինք տալ Ռուսաստանին իբրև քաղաքացիներ և իբրև մեր դատը պաշտպանողի: Այս ամենը չգիտե անգլիական կապիտանը. եթե գիտենար նա, այդ առաջարկը չպիտի աներ: Եկավ Ռուսաստանի հեղափոխությունը. այստեղ տեղը չէ բերելու այն բոլոր պատճառները, որից առաջացավ Ռուսաստանի այնքան ցավալի քայքայումը: Մենք տեսանք, որ մեր հարևանները, որոնց հետ մենք այսօր դժբախտություն ունենք զենքով կռիվ մղելու, նրանք ի գործ դրին այն ամենը, որով կարենան ոչնչացնել մեր իրավունքը մեր երկրի վրա: Վրացիք և ադրբեջանցիք չէին կարող հայտնել, որ այստեղ արթնացել է մի երրորդ ժողովուրդ, որը պաշտպանում է իր հայրենիքը թե մեկից և թե մյուսից. և նրանց այդ համաձայնությունը ուրիշ նպատակ չուներ, քան ջլատել հայ ժողովրդի դիմադրական կորովը: Այս բաները չգիտե անգլիական կապիտանը և եթե գիտենար, նա բոլորովին նման առաջարկներ չպիտի աներ: Բացի այդ, այն ժամանակ, երբ թուրք[ական] զորքը սահմանի այն կողմում ութ հարյուր հազար հայ կոտորելուց հետո գալիս էր այս շրջանը ևս կոտորելու, ահա այդ նույն ժամանակ նորից միացան մեր հարևանները ջախջախելու համար: Նոքա ոչ մի աջակցություն չարին պաշտպանելու այն ֆրոնտը*, որ համառուսական էր, որի ջախջախվելուց հետո պիտի տուժեին և նրանք: Երբ այդ անհավասար կռվի մեջ հայ փոքրաթիվ ժողովուրդը այնքան ստոր դավադրություններով շրջապատված մենակ մնաց, որի համար ընկան Երզնկան, Էրզրումը և Կարսը, երբ հայ ժողովուրդը փախչում գալիս էր Վրաստան, այն խոր հավատով, թե հյուրընկալություն է գտնելու, սակայն հարևան ժողովրդից նա սառն վերաբերմունք ստացավ և

* Ռազմաճակատը:-Ծանոթ. կազմ.:

նույնիսկ հալածանք, որի ապացույց կարող են լինել Նուխին, Բակուրիանին և այլն: Այդ բոլոր սարսափները ձեզ համար դեռ թարմ են, և ես ավելորդ եմ համարում կանգ առնել մանրամասնությունների վրա: Այդ բոլորի նպատակն էր թուլացնել այն տարրը, որ կարող էր մրցորդ լինել. բայց նրանց հաշիվը սխալ դուրս եկավ: Այդ բոլորը չգիտե անգլիական կապիտանը և եթե գիտենար, այդ առաջարկությունները չէր անի: Հիմա բանից դուրս է գալիս, որ մենք այնքան ջարդված ենք, որ չենք կարող պաշտպանել մեր իրավունքը և մեր հարևանը եկավ գրավեց մեր երկիրը, որպես մեր շահերի պաշտպան: Հասել է ժամանակը, որ մենք մեր իրավունքը ճշտենք. ինչու՞ համար մենք մի սահմանակից ժողովրդի զենքով ենք դուրս քշում մեր հողից: Ինչու՞ համար նոքա ուզում են զենքով իրենց իրավունքը հաստատել այն հողի վրա, որ իրենց չի պատկանում:

Մենք ոչ մի թիզ հող օտարի ձեռքից չենք խլել և մտքներովս անգամ չի անցել որևէ ժողովրդի շահերին դիպչել և եթե կարողանանք մեր իրավունքները պաշտպանել, այդ էլ մեծ բան է մեզ համար: Մենք այսօր առաջ ենք խաղում մեր հողի վրա և երբեք չենք հասել մեր հողի իսկական սահմաններին: Երբ որ հասնենք այդ սահմաններին, մենք կանգ կառնենք և այնուհետև թույլ չենք տա, որ որևիցե մեկը մեր իրավունքները ոտնակոխի: Մենք առանց այն էլ բավականաչափ հող և ժողովուրդ ենք թողել նրանց: Մենք հեռու ենք օտարի հողը գրավելու մտքից, բայց չենք էլ կարող օտարին թողնել մեր հողի վրա: Եթե այդ հողը գրավեր մի հզոր ուժ, օրինակ՝ մեր դաշնակիցները, մենք ոչինչ չէինք անի, նկատելով, որ, թերևս, նպատակահարմարը այդ կլիներ: Վեց ամիս շարունակ վիճում էին այն երկրի մասին, որ մերն է և քանի որ մերն է, միթե՞ չի կարելի թողնել այնտեղ մեր զորքը, մինչև դրությունը պարզվի: Անգլիական կապիտանին պետք է այս բոլորը հասկացնել: Կառավարությունը պետք է մի պատգամավորություն ուղարկի, որ ամեն ինչ հասկացնի մեր բարեկամ պետության ներկայացուցչին, որ ասի նրան, թե իր պայմաններից մեկը որոշ հիմունքներով չենք կարող կատարել, ոչ թե չենք ուզում, այլ աննպատակահարմար ենք համարում և վստահ եմ, որ նրանք էլ չեն պնդի: Ես այնքան վստահ և համոզված եմ, որ մեր դաշնակիցները, որոնց համար մենք այնքան արյուն թափեցինք և տառապեցինք, չեմ կասկածում, որ անտես առնեն մեր իրավունքները: Մենք բավական ուժ ունենք այդ երկիրը մեր ձեռքին պահելու. եթե այս ընդհարումներին վերջ տալու ձգտում է այն մտահոգությամբ, որ երկաթուղագծի վրա խաղաղություն տիրե, ես պիտի ասեմ, որ խաղաղությունը այն ժամանակ կլինի, երբ այդտեղ հայ[կական] զորք լինի, որովհետև մենք տեսանք, թե ինչ է նշանակում վրացական զորքերի ներկայությունը Լոռում: Ուրեմն եթե կապիտանի միտքն այդ է, ապա ուրեմն պատգամավորությունը պիտի հասկացնի, որ երբ այդտեղի ժողովուրդը հայ է, վարչությունը հայկական է, մենք չենք կարող հեռացնել մեր զորքերը՝ առանց վնասելու մեր երկրի դատին: Մենք երբեք չենք ցանկացել կռվի դիմել, մեզ ստիպել են այդպես վարվել, և այսօր, ինչպես էլ միշտ, պատրաստ ենք բանակցությունների դիմել և կարող ենք լիազորություն տալ մեր պատգամավորներին, որ նրանք բանակցություն վարեն և վրացիների հետ: Մեր պայմանն այդ է, մենք մեր զորքերը հետ չենք քաշի մեր հողերից, որովհետև մենք չենք կարող թույլ տալ, որ ուրիշները ոտնահարեն մեր իրավունքները: Այս նկատառումներով Հ. Հ. Դաշնակցության ֆրակցիան առաջարկում է հետևյալ բանաձևը՝ «Լսելով կառավարության ձեռք առած միջոցները Ախալքալաքի և Բորչալվի շրջաններից վրաց[ական] զորքերը հեռացնելու և Բորչալվի հայ ազգաբնակությանը վրաց[ական] զորքի բռնություններից ազատելու մասին՝ խորհրդարանը հավանություն է տալիս կատարված քայլերին: Ապա՝ միշտ կողմնակից լինելով հայ վրացական վեճերը խաղաղ ճանապարհով լուծելու և սկզբունքով համաձայն լինելով կապիտան Գրինի առաջարկին՝ Հայաստանի Խորհրդարանը անհնարին է համարում մեր զորքերի հեռացումը, մինչև որ չիրագործվի Հայաստանի անվիճելի մասը կազմող Բորչալվի հայկական բաժնի և Ախալքալաքի գավառի ապահովությունը վրաց[ական] զորքերից: Խորհրդարանը հրահանգում է կառավարության՝ այս հիմքերի վրա հատուկ պատվիրակության միջոցով բանակցու-

թյուններ վարել կապիտան Գրինի և, եթե հարկ լինի, նաև Վրաստանի կառավարության հետ»:

Ստեփանյան - Մենք լսեցինք պարոն Մինիստր-նախագահի հայտարարությունը և կապիտան Գրինի առաջարկը. հիմա ի՞նչ ենք մենք մտածում և ի՞նչ որոշում պետք է կայացնենք: Հայ ազգաբնակություն ունեցող տերիտորիաների վրա կատարվել են բռնություններ, որի հետևանքով հայ ազգաբնակությունը ապստամբվել է և ցանկություն է հայտնել միանալու Հայաստանին: Մեր զորքերը գնացել են օգնելու հայ ժողովրդին, մեր քաջարի բանակը պատվով դուրս եկավ իր վրա դրած պարտքից: Թափվել է եղբայրական արյուն, մենք այդ չենք կամեցել, սակայն կատարվել է: Այժմ եվրոպական պետության ներկայացուցիչը ցանկություն է հայտնում վերջ տալ այդ կոնֆլիկտին: Մեծ Ֆրանսիան, որ XVIII դարում եղբայրական գաղափարների ստեղծագործողը դարձավ, օգնության կգա արդար ձևով վերջացնելու ստեղծված անախորժ դրությունը: Անգլիան և Ամերիկան, մանավանդ վերջինիս ժողովուրդների լիգայի ծրագիրը կգա վերջ դնելու կոնֆլիկտին: Կապիտան Գրինի առաջարկի հետ մենք համաձայն ենք, բացի երկրորդ կետից, այն, որ վերաբերում է Բորչալվի և Ախալքալաքի շրջաններից մեր զորքը հետ քաշելուն: Մենք գտնում ենք, որ այդ առաջարկը երկու կողմերի համար պարտադիր լինի և եթե այդպես չլինի, մենք համաձայն չենք այդ առաջարկին: Ուստի մեր կառավարությունը այդ խնդրում պետք է կանգնի ռեալ հողի վրա: Մանավանդ որ այդ խնդիրները մերն են և վրաց պատմության մեջ դա Սոմխեթիա է կոչվում, այսինքն՝ Հայաստան: Ուստի դաշնակից պետությունների ներկայացուցիչները այդ խնդիրը պետք է հօգուտ Հայաստանի լուծեն, որովհետև Լոռին և Ախալքալաքը թե' ազգագրական և թե' պատմական տեսակետից մերն են: Վերոհիշյալն ի նկատի ունենալով, մեր ֆրակցիան հետևյալ առաջարկությունն է անում. «Հայաստանի Խորհուրդը լսելով Մինիստր-նախագահի հայտարարությունը հայ-վրացական կոնֆլիկտի մասին և այդ առիթով կապիտան Գրինի արած առաջարկությունը, որոշեց՝

1. Սկզբունքով ընդունելի համարել այդ առաջարկությունը.
2. Հավանություն տալ կառավարության գործելակերպին.
3. Հանձնարարել կառավարության միջոցներ ձեռք առնել՝ ապահովելու զինադադարի պայմանները և լուծելու Վրաստանի կողմից հարուցած վեճերը»:

Խոնդկարյան - Մի քանի օր առաջ կառավարությունը հայ-վրացական հարաբերության մասին զեկուցեց խորհրդում և հայտնեց, որ անցանկալի դրություն է ստեղծվել: Այսօր դրությունը մնացել է նույնը, մենք հույս ունեինք, որ հայ-վրացական հարաբերությունը այդպես չէր լինի, բայց մենք կանգնած ենք կատարված փաստի առաջ: Եվ այսօր այդ խնդիրը մեզ համար մի տխուր խորհրդակցության առարկա է դարձել: Այսօր մեզ մնում է որքան կարելի է շուտ վերջ տալ ստեղծված դրության: Մեր ֆրակցիան, որ միշտ կանգնած է եղել հայ-վրացական խաղաղ հարաբերության տեսակետի վրա, այսօր նա մտածում է, որքան կարելի է շուտ լուծումն տալ այդ խնդրին: Այս րոպեին, երբ ընդհանուր խաղաղությունն է սկսում տիրել, երբ մեր դատը կախված է եվրոպական մեծ պետություններից, մենք պետք է ապացուցենք, որ երկու հարևան պետություններ կարող են միմյանց հետ ապրել: Սոց-հեղափոխական ֆրակցիայի կողմից պետք է հայտնեմ, որ մենք ևս ընդունում ենք, որ Լոռին և Ախալքալաքը Հայաստանի անբաժան մասն են. այդ մենք պաշտպանել ենք սոց.-հեղափոխականների կոնֆերանսին: Մենք հույս ունեինք, որ վրաց դեմոկրատիայի ղեկավարները այդ հարցում զգույշ կլինեին և հարցն այդտեղ չէին հասցնի: Բայց այդ քայլն արդեն եղել է. Հայաստանի Խորհուրդը հիմա պետք է աշխատի առանց արյունահեղության, խաղաղ ճանապարհով լուծել ստեղծված անախորժ կացությունը: Եթե հնարավոր է արտաքին ուժերով որոշելու, մենք ընդառաջ կգնանք: Կապիտան Գրինի առաջարկը կոնկրետ է և հնարավոր: Պետք է անմիջապես սկսել Վրաստանի հետ բանակցություններ վարելու գործը և ընդհանուր լեզու գտնել մեր և նրանց մեջ: Ուստի կապիտան Գրինի առաջարկը պետք է ընդունել, ընտրել մի պատգամավորություն, որին կառավարությունը դիրեկտիվներ կտա: Ինչ վերաբերում է զորքի հեռացման, դա մի քիչ վիճելի խնդիր է, օրինակ՝ եթե զորքը հանենք, ինչպե՞ս պիտի կատարվի այդ գործողությունը, տեղում ի՞նչ իշխանություն պիտի ստեղծվի, մի՞թե կարելի է առանց որևէ զորքի կառավարել Լոռին և Ախալքալաքը: Համենայն դեպս այդ հարցը կարող է վճռել պատգամավորությունը, որ կգնա այնտեղ և ավելի իրազեկ կլինի ստեղծված դրության: Ի նկատի ունենալով վերոհիշյալը, մեր ֆրակցիան խորհրդին հետևյալ առաջարկն է անում. «Հայաստանի Խորհուրդը սկզբից կանգնած լինելով հայ-վրացական տարաձայնությունը խաղաղ կերպով լուծելու տեսակետի վրա, ընդառաջ է գնում այն առաջարկին, որ կապիտան Գրինը անում է Հայաստանի կառավարության ու գտնում է, որ այդ առաջադրած կետերը կարող են ծառայել իբրև հիմք, որի շուրջը բանակցելով, կարող կլինի գալ ցանկալի համաձայնության և այդ իսկ պատճառով հրահանգում է ուղարկել Սանահին իր ներկայացուցիչներին բանակցելու Վրաստանի ներկայացուցիչների հետ»:

Նախագահ - Ուրիշ առաջարկներ չկա՞ն:

Ազատյան - Թույլ տվեք:

Նախագահ - Պատգամավոր Ազատյան, խոսքը Ձերն է:

Ազատյան - Հայերի դժբախտության գլխավոր պատճառներից մեկն էլ մեկուսացումն է: Այսօր հայ ժողովրդի ղեկավարները փոխանակ մտածելու չմեկուսանալ, բարեկամներ շահել, ընդհակառակը, հարցին շովինիստական բնույթ են տալիս և թշնամական դիրք ստեղծում: Եթե այսօր հետևեինք Աղբալյանի ճառին, պետք է ասենք, որ ոչ մի համաձայնություն չի կարող լինի մեր և վրացիների մեջ: Հարցը նրանում է, որ այսօր երկու ժողովուրդների արյուն է թափվում և պիտի վերջ տալ դրան: Ռուսաստանի մեծ հեղափոխության դիրքերը չկարողացանք պաշտպանել շնորհիվ Աղբալյանի և նրա նմանների ճառերի. դրա համար էլ Ռուսաստանը կործանվեց: Եթե դուք կանգնած եք այն տեսակետի վրա, որ լայն տերիտորիա ունենանք, ելք դեպի ծով և այլն, դուք ևս կկործանվեք: Եթե Անդրկովկասի երեք ժողովուրդներն էլ ձգտեն լայն տերիտորիայի, կստեղծեն այն դրությունը, ինչ դրություն գոյություն ուներ Բալկաններում: Ինձ բոլորովին չեն ուրախացնում այն լուրեը, որ մենք հաղթում ենք. այդ քաղաքականության պետք է վերջ տրվի: Եթե հարցն արդարության մասին է, մենք ժամանակին կասենք, թե արդյոք մե՞նք ենք արդար, թե՞ վրացիները: Խնդիրն այն տեղը հասցրինք, որ մի երրորդ ուժ, ներկա դեպքում Անգլիան, միջամտեց, որպեսզի խաղաղ ճանապարհով վերջացնի ստեղծված անախորժ դրությունը: Այսօր Անգլիայի միջամտությունը կարող է լավ լինել, բայց չէ՞ որ վաղը մենք նորից կռվելու ենք, որովհետև ամբողջովին շրջապատված ենք շովինիստներով: Ուստի պիտի կարողանանք ապացուցել Եվրոպային, որ մենք էլ կարող ենք հաշտ ապրել և ամեն միջոցով խաղաղության ձգտել: Օտարը չի ասի, թե ում կողմն է արդարությունը. նա կասի, որ այդ ժողովուրդները չեն կարողանում հաշտ ապրել: Այժմ փոխանակ ընդառաջ գնալու կապիտան Գրինի առաջարկին, մենք ծուռ ճանապարհով փորձում ենք խույս տալ նրանից: Եթե վրացիները հանում են իրենց զորքերը, մենք ևս պիտի հանենք, և եթե կենտրոնը համաձայն չէ այս առաջարկին, նշանակում է, նա հետին միտք ունի: Մեզ համար միևնույնն է, թե ում արյունն է հոսում, մենք միշտ էլ դեմ ենք կռվին, պաշտպանում ենք խաղաղությունը և կողմնակից ենք Անդրկովկասի երեք ժողովուրդների միացման: Այդ տեսակետից մեր ֆրակցիան հետևյալ առաջարկն է անում. «Լսելով կառավարության հայտարարությունը կապիտան Գրինի արած առաջարկների մասին, Հայաստանի Խորհուրդը որոշում է ընդունել առաջարկած պայմանները և հանձնարարում է կառավարության՝ ի կատար ածել նրանց, եթե այդ պայմանները կընդունվեն և վրաց կառավարության կողմից»:

Ստ. Մամիկոնյան - Վերջին ճառախոսը շատ իրավացի ասաց, որ մեր մտավորականությունը 30 տարի խոսել է հայ դատի համար, այժմ նա արդեն դատը պետք է պաշտպանի վրաց դեմոկրատիայի միջոցով: Պատգամավոր Ազատյանն ասում է, գնանք և վրաց դեմոկրատիայից խնդրենք մեր դատի լուծումը. սակայն նա մոռանում է, որ արևմուտքում կա նույնպես դեմոկրատիա, որ ամեն տեսա-

կետից ավելի անցյալ ունի և ավելի կշիռ և որին պիտի դիմել մեր դատի արդար լուծման համար և ոչ թե վրաց դեմոկրատիային: Պատգամավոր Աղբալյանը վրաց ժողովրդի ղեկավարների մասին մի քանի դառն ճշմարտություններ ասաց. ես դրա վրա նաև պետք է ավելացնեմ այն հանգամանքը, որ այն ժամանակ, երբ հայը կռվում էր Ղարաքիլիսայում տաճիկների դեմ, վրաց կառավարությունը գերմանական զորքեր բերեց, որոնց աջակցությամբ գրավեց Լոռին, որովհետև գերմանացիների հետ նա դաշն էր կնքել: Գերմանական ներկայացուցիչ Շուլեմբերգը հայտնեց հայերին, թե մոռացեք Լոռու մասին, ձեր սահմանը Ղարաքիլիսեն է: Իսկ երբ Սիարոնյանն ասաց, թե Լոռում վրացիներ չկան, բոլորը հայեր են, Շուլեմբերգը պատասխանեց, թե այնտեղ վրաց կալվածատերեր կան: Գալով խնդրին, մենք համոզված ենք, որ կապիտան Գրինն ունի ազնիվ ցանկություն՝ այս արյունահեղությունը դադարեցնելու, որին մենք ևս համաձայն ենք: Սակայն կան էական պայմաններ, որոնց համաձայն մենք չենք կարող կատարել նրա առաջարկի մի կետը այն մասին, թե մեր զորքը պետք է թողնի գրաված վայրերը և հետ քաշվի մինչև մի որոշ սահման:

Մեր զորքը միշտ տուժել է այն պատճառով, որ նա չի իմացել՝ կռի՞վ է անում, թե խաղաղ պայմաններում է գտնվում: Եթե զինվորն իմանա, որ շուտով խաղաղություն պիտի հաստատվի, նա չի կռվի և չի մեռնի, որովհետև նրա այդ գործն աննպատակ է: Ինչու՞ մեր զորքին հետ պիտի բերենք, հանուն ինչի՞: Եթե զինադադար է, և ոչ հաշտություն, ուրեմն կռվող կողմերը կանգնում են այնտեղ, որտեղ կանգնած են: Եթե դա չի ընդունվի, այն ժամանակ երբ մեր զորքերը դատարկեն Լոռին, նրանք էլ պետք է դատարկեն Ախալքալաքը: Այլ պայմաններում հավասարության իրավունքը խախտվում է և մեր ժողովրդի դրությունը վտանգվում: Այս կարծիքին մենք բոլորս պիտի համաձայնվենք: Այս բոլորից հետո մնում է այն, թե հայ-վրացական կոնֆերանսում ինչ խնդիրներ պետք է շոշափվեն, որովհետև անհրաժեշտ է, որ երկու կողմերն էլ որոշ ծրագրեր ունենան: Այդ կոնֆերանսում մենք պետք է դնենք այն բոլոր խնդիրները, որոնք ստեղծել են այս խեղդող վիճակը: Ընդհարումը մեր և վրացիների մեջ եղել է ոչ թե սահմանաբաժանման համար, այլ այն մի շարք խնդիրների և հարաբերությունների համար, որ ստեղծվել էին մեր և նրանց մեջ: Այդ խնդիրներն են տրանզիտը, այն մթերքները, որոնք պատկանում են մեզ և գտնվում են Վրաստանում և այլն: Վրաստանն ապօրինի կերպով տիրապետեց Ռուսաստանի ժառանգությունը՝ մասն չհանելով Հայաստանին: Նրանց զինվորներն այժմ գործ են ածում շաքար, իսկ մենք՝ դոշաբ, մերոնք կոշիկ չունեն, գլխարկ, շինել և այլն, իսկ վրաց զորքն այդ բոլորն ունի: Մենք պետք է պահանջենք, որ այդ բոլոր ապրանքներից մեզ մաս հանվի: Այս որպեսիս մեր ամբողջ ժողովուրդը տառապում է տարափոխիկ հիվանդություններից, մենք դեղորայք չունենք, այնինչ Ռուսաստանի թողած այդ ապրանքով Վրաստանը հարուստ է: Ահա այս խնդիրներն են, որ պիտի դնել կոնֆերանսում և որոնց համար նախապես վրաց կառավարության համաձայնությունը պետք է առնել: Այս նկատառումներով մենք պետք է կապիտան Գրինին ասենք, որ մենք սկզբունքով համաձայն ենք նրա առաջարկին, պայմանով, որ մեր զորքերը մնան այնտեղ, որտեղ գտնվում են այժմ:

Նախագահ - Առաջարկներ կան վիճաբանությունները դադարեցնելու. առաջարկում եմ թարգմանել բոլոր բանաձևերը և ապա անցնում եմ քվեարկության:

Ավագ քարտուղարը թարգմանում է:

Ազատյան - Ըստ նակազի պետք է քվեարկել այն կարգով, ինչ կարգով որ դրված էին բանաձևերը:

Նախագահ - Շատ լավ. պատգամավոր Մամիկոնյան, դուք բանաձև տալի՞ս եք, թե ոչ:

Մամիկոնյան - Ավելորդ եմ համարում:

Նախագահ - Քվեարկության եմ դնում Հ. Հ. Դաշնակցության ֆրակցիայի բանաձևը. «Լսելով կառավարության ձեռք առած միջոցները Ախալքալաքի և Բորչալվի շրջանների վրա զորքերը հեռացնելու և Բորչալվի հայ ազգաբնակությունը վրաց զորքի բռնություններից ազատելու մասին՝ խորհրդարանը հավանություն է

տալիս կատարված քայլերին: Ապա՝ միշտ կողմնակից լինելով հայ-վրացական վեճերը խաղաղ ճանապարհով լուծելու և սկզբունքով համաձայն լինելով կապիտան] Գրինի առաջարկին՝ Հայաստանի Խորհրդարանը անհնարին է համարում մեր զորքերի հեռացումը, մինչև որ չերաշխավորվի Հայաստանի անվիճելի մասը կազմող Բորչալվի հայկական բաժնի և Ախալքալաքի գավառի ապահովությունը վրաց զորքերից: Խորհրդարանը հրահանգում է կառավարության՝ այս հիմքերի վրա հատուկ պատվիրակության միջոցով բանակցություններ վարել կապիտան Գրինի և, եթե հարկ լինի, նաև Վրաստանի կառավարության հետ:

Այս բանաձևը անցնում է 18 ձայնով, ձեռնպահ են մնում 13 հոգի, դեմ են քվեարկում 4 ձայն:

Ազատյան - Մյուս բանաձևը քվեարկել չարժե:

Նախագահ - Ժամանակը ուշ է. թեև օրակարգի մեջ կա և մի ուրիշ խնդիր՝ պարենավորման մինիստրին ցորեն գնելու համար 7 միլիոն ռուբլու վարկ բանալու մասին: Նիստը հայտարարում եմ փակված:

Քարտուղար՝ *Ե.Սարգսյան*

ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 15, թթ. 47-55: Բնագիր՝ Ձեռագիր: